

COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE

Եվրոպայի խորհրդի կոնվենցիա

Փաստաբանի մասնագիտական
գործունեության պաշտպանության մասին

Նախնական խմբագրություն

Նախաբան

Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները եւ սույն կոնվենցիան ստորագրող մյուս կողմերը,

նկատի ունենալով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն իր անդամների միջեւ առավել միասնության հասնելն է,

հիշատակելով «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիան (ԵՊՇ թիվ 5, 1950թ.) եւ դրան կից արձանագրությունները, ինչպես նաեւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը,

հաշվի առնելով Փաստաբանների դերի վերաբերյալ հիմնական սկզբունքները՝ ընդունված Հանցագործությունների կանխարգելման եւ իրավախախտների հետ վարվելաձեւին նվիրված Միավորված ազգերի կազմակերպության ութերորդ կոնգրեսի կողմից (Կուբա, Հավանա, 1990 թվականի օգոստոսի 27-ից սեպտեմբերի 7),

հաշվի առնելով անդամ պետություններին ուղղված՝ փաստաբանի մասնագիտական գործունեության իրականացման ազատության վերաբերյալ Նախարարների կոմիտեի Rec(2000)21 առաջարկությունը,

հաշվի առնելով Դատական իշխանության, երդվյալ ատենակալների եւ ասեսորների անկախության եւ անաչառության ու փաստաբանների անկախության մասին թիվ 44/9 բանաձեւը՝ ընդունված 2020 թվականի հուլիսի 16-ին Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների խորհրդի կողմից,

ընդգծելով փաստաբանների եւ նրանց մասնագիտական ասոցիացիաների հիմնարար դերն օրենքի գերակայությունը պահպանելու, արդարադատության մատչելիությունը երաշխավորելու եւ մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանությունն ապահովելու գործում,

խորին մտահոգությամբ նշելով, որ փաստաբաններն աստիճանաբար ավելի հաճախակի են ենթարկվում հարձակումների, սպառնալիքների, ոտնձգությունների եւ ահաբեկումների՝ պայմանավորված իրենց մասնագիտական գործունեությամբ, ինչպես նաեւ անտեղի խոչընդոտների կամ միջամտության՝ իրենց իրավաչափ մասնագիտական գործունեությունն իրականացնելիս,

դատապարտելով բոլոր այդպիսի հարձակումները, սպառնալիքները, ոտնձգություններն ու անտեղի խոչընդոտները կամ միջամտությունը,

հաշվի առնելով այն տարբեր եղանակները, որոնցով փաստաբանի մասնագիտական գործունեությունը կարող է կազմակերպվել Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում կամ սույն կոնվենցիան ստորագրող մյուս կողմերում,

հաշվի առնելով փաստաբանի կողմից մասնագիտական գործունեություն իրականացնելու ազատությունն ապահովելուն ուղղված միջազգային իրավական շրջանակն ամրապնդելու անհրաժեշտությունը,

համաձայնեցին հետեւյալի մասին.

Գլուխ I. Նպատակը, գործողության ոլորտը և եզրույթների օգտագործումը

Հոդված 1. Կոնվենցիայի նպատակը

1. Սույն կոնվենցիայի նպատակն է ամրապնդել փաստաբանի մասնագիտական գործունեության պաշտպանությունը և ինքնուրույն ու առանց խտրականության, անտեղի խոչընդոտների կամ միջամտության կամ հարձակումների, սպառնալիքների, ոտնձգությունների կամ ահաբեկման ենթարկվելու մասնագիտական գործունեություն իրականացնելու իրավունքը:

2. Սույն կոնվենցիան սահմանում է հատուկ մեխանիզմ՝ Կողմերի կողմից դրա դրույթների արդյունավետ իրականացումն ապահովելու համար:

Հոդված 2. Գործողության ոլորտը

1. Սույն կոնվենցիան կիրառվում է փաստաբանների և նրանց մասնագիտական ասոցիացիաների մասնագիտական գործունեության նկատմամբ:

2. Կոնվենցիայի 5-9-րդ հոդվածներում սահմանված դրույթները, այնքանով, որքանով դրանք համապատասխանում են կոնկրետ իրավիճակին, կիրառելի են այն փաստաբանների նկատմամբ, որոնք իրենց երկրում ստացած կոչմանը համապատասխան տրամադրում են իրավաբանական խորհրդատվություն, աջակցություն կամ ներկայացուցչություն որեւէ Կողմում, և որոնք՝

ա. ներառված են սույն կոնվենցիայի 20-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան մյուս Կողմի ներկայացրած հայտարարության մեջ, կամ

բ. տրամադրում են դրանք տվյալ Կողմի իրավունքին, Եվրոպական միության իրավունքին կամ միջազգային համաձայնագրերին համապատասխան:

3. Սույն կոնվենցիայի 6-րդ հոդվածում (փաստաբանների մասնագիտական իրավունքները), 7-րդ հոդվածում (արտահայտվելու ազատությունը) եւ 9-րդ հոդվածի (պաշտպանության միջոցները) 4-րդ կետում սահմանված դրույթները կիրառելի են նաեւ՝

ա. ցանկացած անձի նկատմամբ, որը, ի խախտումն սույն կոնվենցիայի 5-րդ եւ 8-րդ հոդվածների, չի ստացել փաստաբանի որակավորում կամ փաստաբանական գործունեությամբ զբաղվելու լիցենզիա, կամ այն ուժը կորցրած է ճանաչվել կամ կասեցվել է,

բ. ցանկացած անձի նկատմամբ, որը միջազգային դատարանի կամ տրիբունալի կողմից կամ միջազգային կազմակերպության կողմից ստեղծված մարմնի կողմից ճանաչվել է իրավասու դրա կողմից իրականացվող վարույթներում հանդես գալու համար՝ այդ վարույթների հետ կապված խորհրդատվություն տրամադրելիս կամ այդ վարույթներում հանդես գալու ժամանակ:

4. Սույն կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» եւ «գ» ենթակետերում եւ 9-րդ հոդվածի 4-րդ կետում սահմանված դրույթները կիրառելի են նաեւ այն անձանց նկատմամբ, որոնք աշխատանքի են ընդունվել կամ ներգրավվել են փաստաբանների կողմից՝ օգնելու նրանց, այնքանով, որքանով նրանք ուղղակիորեն օժանդակում են այդ փաստաբաններին մասնագիտական գործունեության իրականացման հարցում:

5. Սույն կոնվենցիայի 9-րդ հոդվածի 4-րդ կետում սահմանված դրույթները կիրառելի են նաեւ այն անձանց նկատմամբ, որոնք աշխատանքի են ընդունվել կամ ներգրավվել են՝ օգնելու մասնագիտական ասոցիացիաներին, այնքանով, որքանով դա վերաբերում է նրանց կողմից այդ ասոցիացիաների մասնագիտական գործունեության իրականացմանը:

Հոդված 3. Եզրույթների օգտագործումը

Սույն կոնվենցիայի նպատակներով՝

ա. «փաստաբան» նշանակում է ցանկացած ֆիզիկական անձ, որը, ազգային իրավունքի համաձայն, որակավորված եւ լիազորված է զբաղվելու փաստաբանական գործունեությամբ.

բ. «վստահորդ» նշանակում է ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որին խորհրդատվություն է տրամադրում, աջակցում կամ ներկայացնում է փաստաբանը.

գ. «հնարավոր վստահորդ» նշանակում է ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիմում է տվյալ փաստաբանին՝ խորհրդատվություն, աջակցություն ստանալու կամ ներկայացվելու համար.

դ. «մասնագիտական ասոցիացիա» նշանակում է ներկայացուցչական մարմին, որի անդամ են ուղղակիորեն կամ անուղղակիորեն, կամ որում ներգրավված են որոշ փաստաբաններ կամ բոլոր փաստաբանները, եւ որը կրում է որոշակի պատասխանատվություն՝ ազգային իրավունքի համաձայն կազմակերպելու կամ կարգավորելու նրանց մասնագիտական գործունեությունը.

ե. «փաստաբանների մասնագիտական գործունեություն» նշանակում է ցանկացած գործողություն՝ ուղղված վստահորդին կամ հնարավոր վստահորդին ազգային, օտարերկրյա կամ միջազգային իրավունքի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված խորհրդատվություն, աջակցություն կամ ներկայացուցչություն նախապատրաստելուն կամ տրամադրելուն, ինչը կարող է ձեռնարկվել թե՛ այն Կողմերում, որտեղ նրանք ստեղծվել են, թե՛ ցանկացած այլ տեղ, այդ թվում՝ միջազգային դատարանի կամ տրիբունալի կողմից իրականացվող կամ միջազգային կազմակերպության կողմից ստեղծված մարմնի կողմից իրականացվող վարույթի եւ աշխատանքի առնչությամբ.

զ. «մասնագիտական ասոցիացիաների մասնագիտական գործունեություն» նշանակում է սույն կոնվենցիայի 4-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված ցանկացած գործողություն.

է. «պետական մարմիններ» նշանակում է՝

i. կառավարություն եւ վարչակազմ՝ ազգային, տարածաշրջանային եւ տեղական մակարդակում,

ii. օրենսդիր եւ դատական մարմիններ՝ այնքանով, որքանով դրանք իրականացնում են վարչական գործառույթներ՝ համաձայն ազգային իրավունքի,

iii. ֆիզիկական կամ իրավաբանական անձինք՝ այնքանով, որքանով դրանք իրականացնում են վարչական լիազորություններ.

ը. «նախատեսված է օրենքով» եւ «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» արտահայտություններն ընկալվում են «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի իմաստով, ինչպես մեկնաբանվում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից:

Գլուխ II. Նյութաիրավական դրույթներ

Հոդված 4. Մասնագիտական ասոցիացիաները

1. Կողմերն ապահովում են, որ ազգային իրավական եւ կարգավորող շրջանակով երաշխավորվի, որ մասնագիտական ասոցիացիաները լինեն անկախ, ինքնակառավարվող մարմիններ: Դրանց գործադիր մարմինների ցանկացած ընտրություն պետք է իրականացվի կիրառելի կանոններին համապատասխան եւ առանց արտաքին միջամտության:

2. Կողմերն ապահովում են, որ մասնագիտական ասոցիացիաները կարողանան՝

ա. խթանել եւ ներկայացնել փաստաբանների եւ նրանց մասնագիտական շահերը,

բ. խթանել եւ պաշտպանել փաստաբանների անկախությունը եւ նրանց դերը հասարակության մեջ,

գ. մշակել վարքագծի մասնագիտական չափանիշներ եւ խթանել դրանց պահպանումը՝ սույն կոնվենցիային համապատասխան,

դ. խթանել տվյալ մասնագիտության մատչելիությունը, ինչպես նաեւ փաստաբանների շարունակական կրթությունն ու վերապատրաստումը,

ե. համագործակցել փաստաբանների, մասնագիտական այլ ասոցիացիաների եւ միջազգային, միջկառավարական կամ հասարակական կազմակերպությունների հետ՝ իրավունքի եւ փաստաբանական գործունեության, այդ թվում՝ փաստաբանների դերի խթանման եւ պաշտպանության հետ կապված հարցերով, եւ

զ. խթանել փաստաբանների բարեկեցությունը եւ անհրաժեշտության դեպքում աջակցել նրանց եւ նրանց ընտանիքներին:

3. Կողմերն ապահովում են, որ մասնագիտական ասոցիացիաների հետ ժամանակին եւ արդյունավետ խորհրդակցություններ անցկացվեն կառավարության կողմից առաջարկվող՝ օրենսդրության, ընթացակարգային եւ վարչական կանոնների ցանկացած փոփոխության վերաբերյալ, որն անմիջականորեն ազդում է փաստաբանների մասնագիտական գործունեության եւ փաստաբանական գործունեության կարգավորման վրա:

4. Կողմերն ապահովում են, որ մասնագիտական ասոցիացիային անդամակցելու որեւէ պահանջ չխոչընդոտի փաստաբանների կողմից այլ ասոցիացիաների ձեւավորումը եւ դրանց մասնակցությունը՝ իրենց մասնագիտական շահերն ու գործունեությունը խթանելու համար:

Հոդված 5. Փաստաբանական գործունեություն իրականացնելու իրավունքը

1. Կողմերն ապահովում են, որ փաստաբանական գործունեություն իրականացնելու համար ընդունումը, հետագա թույլտվությունը եւ կրկնակի ընդունումը նախատեսված լինեն օրենքով, եւ՝

ա. հիմնված լինեն օբյեկտիվ, համարժեք եւ թափանցիկ չափորոշիչների վրա, որոնք կիրառվում են արդար գործընթացի միջոցով, եւ

բ. չենթարկվեն խտրականության Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով արգելված որեւէ հիմքով:

2. Կողմերն ապահովում են, որ փաստաբանական գործունեություն իրականացնելու համար ընդունման, հետագա թույլտվության եւ կրկնակի ընդունման վերաբերյալ որոշումներն ընդունվեն մասնագիտական ասոցիացիայի կամ այլ անկախ մարմնի կողմից եւ ենթակա լինեն վիճարկման օրենքի հիման վրա ստեղծված անկախ եւ անաչառ դատարան կամ տրիբունալ:

Հոդված 6. Փաստաբանների մասնագիտական իրավունքները

1. Կողմերն ապահովում են, որ փաստաբանները կարողանան՝

ա. առաջարկել եւ տրամադրել իրավական խորհրդատվություն, աջակցություն եւ ներկայացուցչություն, այդ թվում՝ մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության նպատակով,

բ. համաձայնել կամ հրաժարվել ընդունելու ֆիզիկական կամ իրավաբանական անձանց որպես իրենց վստահորդներ եւ դադարեցնել փաստաբան-վստահորդ հարաբերությունները,

գ. ունենալ արագ եւ պատշաճ հասանելիություն իրենց վստահորդներին եւ հնարավոր վստահորդներին, նույնիսկ երբ վերջիններս զրկված են ազատությունից,

դ. ճանաչվել որպես անձինք, որոնք լիազորված են խորհրդատվություն տրամադրել, աջակցել կամ ներկայացնել իրենց վստահորդներին,

ե. իրենց վստահորդների անունից հանդես գալու ժամանակ արդյունավետ հասանելիություն ունենալ իրավասու պետական մարմինների, դատարանների եւ տրիբունալների տիրապետման կամ հսկողության ներքո գտնվող համապատասխան նյութերին՝ առանց անհարկի ուշացումների եւ սահմանափակումների,

զ. արդյունավետ հասանելիություն եւ շփում ունենալ այն դատարանի, տրիբունալի կամ մարմնի հետ, որին դիմելու համար նրանք ունեն համապատասխան որակավորում,

է. ներկայացնել դիմումներ կամ միջնորդություններ իրենց վստահորդների անունից, այդ թվում՝ այն դատավորի, դատախազի կամ մարմնի անդամի ինքնաբացարկի վերաբերյալ, որը պետք է որոշում կայացնի կոնկրետ գործով, ինչպես նաեւ վարույթի իրականացման առնչությամբ,

ը. արդյունավետորեն մասնակցել այն բոլոր վարույթներին, որոնցում նրանք գործում են իրենց վստահորդների անունից,

թ. հանրությանը տեղեկացնել իրենց ծառայությունների մասին:

2. Կողմերն ապահովում են, որ փաստաբանները քաղաքացիական կամ քրեական պատասխանատվություն չկրեն իրենց վստահորդների անունից բոլոր վարույթների իրականացման ընթացքում բարեխղճորեն եւ ջանասիրաբար արված բանավոր եւ գրավոր հայտարարությունների համար:

3. Կողմերն ապահովում են, որ փաստաբանները՝

ա. կարողանան իրենց վստահորդներին կամ հնարավոր վստահորդներին տրամադրել իրավաբանական խորհրդատվություն մասնավոր հիմունքներով՝ նրանց հետ հանդիպելով առանձին,

բ. կարողանան իրենց վստահորդների կամ հնարավոր վստահորդների հետ հաղորդակցվել խորհրդապահական կարգով՝ անկախ այն բանից, թե ինչ միջոցներով եւ ինչ ձեւով է տեղի ունենում այդ հաղորդակցությունը,

գ. հարկադրված չլինեն բացահայտել, փոխանցել վստահորդներից կամ ապագա վստահորդներից ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստացված որեւէ տեղեկություն կամ նյութ կամ ցուցմունք տալ դրա առնչությամբ, ներառյալ՝ նրանց հետ ցանկացած ձեւով հաղորդակցություն եւ այդ հաղորդակցության կամ նրանց անունից դատական վարույթի իրականացման կապակցությամբ կազմված ցանկացած նյութ:

4. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերով սահմանված իրավունքների իրացման նկատմամբ որեւէ սահմանափակում չպետք է կիրառվի՝ բացառությամբ այն սահմանափակումների, որոնք նախատեսված են օրենքով եւ անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում: Այդ սահմանափակումները կարող են ներառել, սակայն չսահմանափակվելով դրանով, իրավաբանական խորհրդատվության, աջակցության եւ ներկայացուցչության՝ բոլորի համար հասանելիություն ապահովելուն ուղղված պահանջները:

5. Կողմերն ապահովում են, որ փաստաբանները չկրեն իրենց վստահորդների կամ իրենց վստահորդների խնդիրների հետ նույնականացվելու արդյունքում առաջացող բացասական հետեւանքները: Սույն հոդվածը կիրառվում է՝ չսահմանափակելով «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայով եւ ներպետական իրավունքով պաշտպանվող արտահայտվելու ազատությունը:

Հոդված 7. Արտահայտվելու ազատությունը

1. Կողմերն ապահովում են փաստաբանների իրավունքը՝ հանրությանը տեղեկացնելու իրենց վստահորդների գործերին առնչվող հարցերի մասին՝ հաշվի առնելով միայն այն սահմանափակումները, որոնք նախատեսված են օրենքով եւ

բխում են մասնագիտական պարտականություններից, արդարադատության իրականացման եւ մասնավոր կյանքը հարգելու պահանջներից, եւ որոնք անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում:

2. Կողմերն ապահովում են փաստաբանների անհատական եւ կոլեկտիվ իրավունքը եւ մասնագիտական ասոցիացիաների իրավունքը՝ խթանելու օրենքի գերակայությունը եւ դրա պահպանումը, մասնակցելու գործող եւ առաջարկվող իրավական դրույթների էության, մեկնաբանման եւ կիրառման, դատական որոշումների, արդարադատության իրականացման եւ դրա մատչելիության, մարդու իրավունքների խթանման եւ պաշտպանության վերաբերյալ հանրային քննարկումներին, ինչպես նաեւ ներկայացնել առաջարկություններ՝ այդ հարցերի հետ կապված բարեփոխումների վերաբերյալ:

Հոդված 8. Կարգապահությունը

1. Կողմերն ապահովում են, որ փաստաբանների նկատմամբ կիրառվող կարգապահական միջոցները հիմնված լինեն բացառապես վարքագծի մասնագիտական չափանիշների վրա, որոնք նախատեսված են օրենքով եւ ինքնին համապատասխանում են «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայով սահմանված իրավունքներին ու ազատություններին:

2. Կողմերն ապահովում են, որ փաստաբանների նկատմամբ իրականացվող կարգապահական վարույթները՝

ա. ներկայացվեն՝

i. մասնագիտական ասոցիացիայի կողմից ստեղծված՝ կարգապահական հարցերով անկախ եւ անաչառ հանձնաժողով,

ii. անկախ եւ անաչառ մարմին, կամ

iii. օրենքի հիման վրա ստեղծված անկախ եւ անաչառ դատարան կամ տրիբունալ,

բ. անհապաղ քննության առնվեն,

գ. իրականացվեն «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված արդար դատաքննության պահանջներին համապատասխան եւ իրենց կողմից ընտրված փաստաբանից խորհրդատվություն, աջակցություն կամ ներկայացուցչություն ստանալու իրավունքով, եւ

դ. ենթակա լինեն համապատասխան փաստաբանի կողմից վիճարկման օրենքի հիման վրա ստեղծված անկախ եւ անաչառ դատարան կամ տրիբունալ:

3. Կողմերն ապահովում են, որ փաստաբանների նկատմամբ կարգապահական տույժեր կիրառելիս պահպանվեն օրինականության, խտրականության բացառման եւ համաչափության սկզբունքները: Փաստաբանական գործունեություն իրականացնելու իրավունքի նկատմամբ արգելքները միայն կիրառվում են մասնագիտական չափանիշների լրջագույն խախտումների դեպքում:

Հոդված 9. Պաշտպանության միջոցները

1. Կողմերը, հանցագործությունները կանխելու, քննելու կամ հանցանք կատարած անձանց հետապնդելու կամ այլոց իրավունքները պաշտպանելու համար օրենքով նախատեսված եւ ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ սահմանափակումներին համապատասխան, ապահովում են, որ փաստաբանները՝

ա. ազատագրկման դեպքում հասանելիություն ունենան իրենց կողմից ընտրված փաստաբանին,

բ. կարողանան իրենց մասնագիտական ասոցիացիայի ներկայացուցչին առանց անհարկի ուշացման տեղեկացնել իրենց ազատագրկման, դրա հիմքերի եւ պահման վայրի մասին,

գ. ունենան անկախ փաստաբան կամ ներկայացուցիչ իրենց մասնագիտական ասոցիացիայից, որը ներկա կլինի՝

i. իրենց կամ որեւէ այլ տարածքի, տրանսպորտային միջոցի կամ իրենց կողմից մասնագիտական գործունեության ընթացքում օգտագործվող սարքերի ցանկացած խուզարկության, որը կիրականացվի որպես քաղաքացիական, քրեական կամ վարչական քննության կամ գործընթացի մաս, կամ

ii. փաստաթղթերի, այլ տվյալների եւ նրանց կողմից մասնագիտական գործունեության նպատակով օգտագործվող սարքավորումների առգրավմանը կամ կրկնօրինակմանը՝

բացառությամբ այն դեպքերի, երբ խուզարկությունը կամ առգրավումն իրականացնող անձանց կողմից չի կատարվում փաստաթղթերի կամ տվյալների զննություն,

դ. ազատագրկման դեպքում եւ խուզարկությունից կամ փաստաթղթերի առգրավումից կամ կրկնօրինակումից առաջ տեղեկացվեն սույն կետի «ա», «բ», «գ» ենթակետերով սահմանված իրենց իրավունքների մասին:

2. Կողմերն ապահովում են, որ առկա լինեն եւ պահպանվեն համապատասխան երաշխիքներ, երբ մասնագիտական գործունեության վերահսկողություն իրականացնելիս կատարվում են ստուգումներ, կամ ձեռնարկվում են այլ միջոցառումներ:

3. Կողմերն ապահովում են, որ մասնագիտական ասոցիացիաները, հանցագործությունները կանխելու, քննելու եւ հանցանք կատարած անձանց հետապնդելու կամ այլոց իրավունքները պաշտպանելու համար օրենքով նախատեսված եւ ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ

սահմանափակումներին համապատասխան, կարողանան պաշտպանել սույն կոնվենցիայով սահմանված իրավունքները, այդ թվում՝

ա. իրենց ներկայացուցիչների միջոցով արդյունավետ հասանելիություն ունենալ ազատագրված փաստաբաններին՝ փաստաբանների պահանջի առկայության դեպքում,

բ. առանց անհարկի ուշացման տեղեկացվել այն դեպքերի մասին, որոնց մասին տեղյակ են իրավապահ մարմինները, այն փաստաբանների մասին, որոնք ենթարկվել են հարձակման կամ սպանվել են, երբ հիմքեր կան կարծելու, որ դա տեղի է ունեցել նրանց մասնագիտական գործունեությամբ պայմանավորված, եւ այդ դեպքերն այլ պարագայում չէին հանրայնացվի, եւ եթե փաստաբանները դրանց մասին անձամբ հայտնելու համար համապատասխան կարգավիճակում չեն գտնվում,

գ. հնարավորություն ունենալ ներկա գտնվելու փաստաբանների դեմ ներկայացված ցանկացած վարույթով լսումներին, երբ հիմքեր կան կարծելու, որ դա պայմանավորված է նրանց մասնագիտական գործունեությամբ:

4. Կողմերը՝

ա. ապահովում են, որ փաստաբանները եւ նրանց մասնագիտական ասոցիացիաները կարողանան իրականացնել իրենց մասնագիտական գործունեությունն ու օգտվեն սույն կոնվենցիայի 7-րդ հոդվածով սահմանված իրենց իրավունքներից՝ առանց թիրախ դառնալու՝

i. որեւէ ֆիզիկական հարձակման, սպառնալիքի, ոտնձգության կամ ահաբեկման, կամ

ii. որեւէ անտեղի խոչընդոտի կամ միջամտության,

բ. ձեռնպահ են մնում սույն կետի «ա» ենթակետում նշված գործողություններին ներգրավվելուց, եւ

գ. իրականացնում են սույն կետի «ա» ենթակետով սահմանված վարքագծի արդյունավետ քննություն, երբ հիմքեր կան ենթադրելու, որ դա կարող է հանցագործություն համարվել:

5. Կողմերը ձեռնպահ են մնում որեւէ միջոց ձեռնարկելուց կամ որեւէ գործելակերպ խրախուսելուց, որը կարող է խաթարել մասնագիտական ասոցիացիաների անկախությունը եւ ինքնակառավարվող բնույթը:

Գլուխ III. Մշտադիտարկման մեխանիզմները

Հոդված 10. Փաստաբանի մասնագիտական գործունեության պաշտպանության հարցերով փորձագետների խումբ

1. Փաստաբանի մասնագիտական գործունեության պաշտպանության հարցերով փորձագետների խումբը (այսուհետ՝ ԳՐԱՎՈ) մշտադիտարկում է Կողմերի կողմից սույն կոնվենցիայի իրականացումը:

2. ԳՐԱՎՈ-ն կազմված է նվազագույնը ութ եւ առավելագույնը 12 անդամից: Դրա անդամներն ընտրվում են սույն կոնվենցիայի 11-րդ հոդվածին համապատասխան ստեղծված Կողմերի կոմիտեի կողմից՝ Կողմերի առաջադրած թեկնածուներից, որոնք ընտրվել են Կողմերի քաղաքացիներից՝ չորս տարի ժամկետով, որը կարող է երկարաձգվել մեկ անգամ:

3. Ութ անդամների նախնական ընտրությունն անցկացվում է սույն կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում: Չորս լրացուցիչ անդամների ընտրությունն անցկացվում է 25-րդ վավերացումից կամ միացումից հետո:

4. ԳՐԱՎՈ-ի անդամների ընտրությունը հիմնված է հետեւյալ սկզբունքների վրա.

ա. անդամներն ընտրվում են թափանցիկ ընթացակարգով՝ բարձր բարոյական հատկանիշներ ունեցող անձանցից, որոնք սույն կոնվենցիայով նախատեսված ոլորտներում ցուցաբերել են իրենց մասնագիտական փորձառությունը.

բ. ԳՐԱՎՈ-ի երկու անդամներ չեն կարող լինել նույն պետության քաղաքացիներ.

գ. անդամները պետք է ներկայացնեն տարբեր իրավական համակարգեր.

դ. ԳՐԱՎՈ-ի կազմը պետք է ապահովի գենդերային եւ աշխարհագրական հավասարակշռություն.

ե. անդամները հանդես են գալիս իրենց անունից, անկախ եւ անաչառ են իրենց գործառույթներն իրականացնելիս եւ պետք է հասանելի լինեն իրենց պարտականություններն արդյունավետորեն իրականացնելու համար:

5. ԳՐԱՎՈ-ի անդամների ընտրության կարգը որոշվում է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից՝ Կողմերի հետ խորհրդակցություններ անցկացնելուց եւ նրանց միաձայն հավանությունն ստանալուց հետո՝ սույն կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում:

6. ԳՐԱՎՈ-ն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

7. ԳՐԱՎՈ-ի անդամները, ինչպես նաեւ սույն կոնվենցիայի 12-րդ հոդվածով սահմանված կարգով երկրներ այցեր կատարող պատվիրակությունների մյուս անդամներն օգտվում են սույն կոնվենցիայի հավելվածով սահմանված արտոնություններից ու անձեռնմխելիությունից:

Հոդված 11. Կողմերի կոմիտեն

1. Կողմերի կոմիտեն կազմված է սույն կոնվենցիայի Կողմերի ներկայացուցիչներից, եւ Կողմերը պետք է ձգտեն դրա կազմում հասնել գենդերային հավասարակշռության:

2. Կողմերի կոմիտեի նիստերը գումարվում են Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի կողմից: Կոմիտեի առաջին նիստն անցկացվում է սույն կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում: Հետագայում նիստ անցկացվում է ցանկացած ժամանակ, երբ Կողմերի մեկ երրորդը, Կողմերի կոմիտեի նախագահը կամ Գլխավոր քարտուղարը նման պահանջ են ներկայացնում:

3. Կողմերի կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

Հոդված 12. Ընթացակարգը

1. Գնահատման ընթացակարգերը բաժանվում են փուլերի: ԳՐԱՎՈ-ն սահմանում է այդ ընթացակարգի իրականացման շրջանակը եւ համապատասխան միջոցները, ինչպիսիք են հարցումները, որոնք կարող են Կողմերի կողմից կոնվենցիայի իրականացման գնահատման ընթացակարգի հիմք ծառայել:

2. ԳՐԱՎՈ-ն կոնվենցիայի իրականացման մասին տեղեկություններ ստանում է տվյալ Կողմից: Բացի այդ, այն կարող է կոնվենցիայի իրականացման վերաբերյալ տեղեկություններ ստանալ հասարակական կազմակերպություններից եւ քաղաքացիական հասարակությունից, մասնագիտական ասոցիացիաներից, ինչպես նաեւ մարդու իրավունքների պաշտպանության ազգային կառույցներից: ԳՐԱՎՈ-ն պատշաճ կերպով ուսումնասիրում է նաեւ Եվրոպայի խորհրդի այլ փաստաթղթերից եւ մարմիններից, ինչպես նաեւ այլ տարածաշրջանային եւ միջազգային կազմակերպություններից ստացված տեղեկություններն այն ոլորտների վերաբերյալ, որոնք սույն կոնվենցիայի շրջանակում են:

3. ԳՐԱՎՈ-ն կարող է կազմակերպել երկրներ կատարվող այցելություններ՝ համագործակցելով ազգային մարմինների հետ եւ անհրաժեշտության դեպքում ներգրավելով անկախ ազգային փորձագետներ, եթե ձեռք բերված տեղեկությունները բավարար չեն, եւ տեղեկություններ հուսալիորեն

ստանալու այլ հնարավոր եղանակներ առկա չեն, կամ սույն կոնվենցիայի 13-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերում: Այցելությունները կրում են լրացուցիչ բնույթ եւ սահմանափակվում են այն ոլորտներով, որոնց առնչությամբ, ըստ ԳՐԱՎՈ-ի, բավարար տեղեկություններ չկան, ինչպես նաեւ սույն կոնվենցիայի 13-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերով:

4. Այցելություններն իրականացվում են ԳՐԱՎՈ-ի պատվիրակության կողմից: Այցելությունների ընթացքում պատվիրակությանը կարող են աջակցել հատուկ բնագավառների մասնագետներ: Այցելությունների ընթացքում պատվիրակությունը պետք է ունենա՝

- i. համապատասխան իրավագործության սահմաններում ազատ տեղաշարժվելու իրավունք,
- ii. պետական իշխանությունների հետ հաղորդակցվելու հնարավորություն,
- iii. առանց խոչընդոտների՝ իրենց նախընտրած անձանց հետ մասնավոր կարգով հարցազրույց վարելու հնարավորություն,
- iv. երկիր կատարած այցելությանը վերաբերող նյութերին մատչելիություն:

5. ԳՐԱՎՈ-ն նախապատրաստում է զեկույցի նախագիծ, որը ներառում է իր վերլուծությունն այն դրույթների իրականացման վերաբերյալ, որոնց վրա հիմնված է գնահատումը, ինչպես նաեւ իր նկատառումներն ու առաջարկություններն այն մասին, թե ինչպես կարող է տվյալ Կողմը լուծել բացահայտված խնդիրները: Զեկույցի նախագիծն ուղարկվում է գնահատման ենթարկվող Կողմին՝ մեկնաբանությունների համար: Կողմի մեկնաբանությունները հաշվի են առնվում ԳՐԱՎՈ-ի կողմից՝ իր զեկույցն ընդունելիս:

6. Ստացված բոլոր տեղեկությունների եւ տվյալ Կողմի մեկնաբանությունների հիման վրա՝ ԳՐԱՎՈ-ն ընդունում է սույն կոնվենցիայի դրույթների իրականացման համար Կողմի ձեռնարկած միջոցների վերաբերյալ իր

զեկույցը եւ եզրակացությունները: Այդ զեկույցն ու եզրակացություններն ուղարկվում են տվյալ Կողմին եւ Կողմերի կոմիտե: ԳՐԱՎՈ-ի զեկույցն ու եզրակացությունները տվյալ Կողմի ցանկացած մեկնաբանության հետ միասին հրապարակվում են ընդունման պահից:

7. Չխախտելով սույն հոդվածի 1-6-րդ կետերով նախատեսված ընթացակարգը՝ Կողմերի կոմիտեն կարող է ԳՐԱՎՈ-ի զեկույցի եւ եզրակացությունների հիման վրա ընդունել տվյալ Կողմին ուղղված առաջարկություններ՝

ա. ԳՐԱՎՈ-ի եզրակացություններն իրականացնելու համար ձեռնարկման ենթակա միջոցառումների վերաբերյալ՝ անհրաժեշտության դեպքում սահմանելով դրանց իրականացմանն ուղղված տեղեկությունների ներկայացման ամսաթիվ, եւ

բ. ուղղված տվյալ Կողմի հետ համագործակցության խթանմանը՝ սույն կոնվենցիայի պատշաճ իրականացման համար:

Հոդված 13. Արտահերթ ընթացակարգը

1. Եթե ԳՐԱՎՈ-ն ստանում է հավաստի տեղեկություն որեւէ իրավիճակի վերաբերյալ, երբ պահանջվում է խնդիրների անհապաղ լուծում՝ սույն կոնվենցիայի լուրջ խախտումների չափը կամ թիվը կանխելու կամ սահմանափակելու համար, ապա այն կարող է տվյալ Կողմից պահանջել անհապաղ ներկայացնել հատուկ զեկույց՝ այդպիսի խախտումները կանխելու համար ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ:

2. Հաշվի առնելով տվյալ Կողմի ներկայացրած տեղեկությունները, ինչպես նաեւ իրեն հասանելի այլ հավաստի տեղեկություններ՝ ԳՐԱՎՈ-ն կարող է նշանակել իր անդամներից մեկին կամ մի քանիսին՝ քննություն անցկացնելու եւ ԳՐԱՎՈ-ին հրատապ զեկույցելու նպատակով: Քննությունը կարող է թույլտվության առկայության դեպքում եւ տվյալ Կողմի համաձայնությամբ ներառել այցելություն այդ Կողմի տարածք:

3. Սույն հոդվածի 2-րդ կետում նշված քննության արդյունքներն ուսումնասիրելուց հետո ԳՐԱՎՈ-ն այդ արդյունքները փոխանցում է տվյալ Կողմին եւ անհրաժեշտության դեպքում՝ Կողմերի կոմիտեին, Նախարարների կոմիտեին եւ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովին ցանկացած մեկնաբանության եւ առաջարկության հետ միասին: ԳՐԱՎՈ-ի զեկույցն ու եզրակացությունները տվյալ Կողմի մեկնաբանությունների հետ միասին հրապարակվում են ընդունման պահից:

Հոդված 14. Կարծիքներ

ԳՐԱՎՈ-ն կարող է անհրաժեշտության դեպքում ընդունել սույն կոնվենցիայի իրականացման վերաբերյալ կարծիքներ:

Հոդված 15. Հարաբերություններն այլ մարմինների հետ

Նախարարների կոմիտեն եւ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը պետք է պարբերաբար տեղեկացվեն սույն կոնվենցիայի իրականացման վերաբերյալ:

Գլուխ IV. Կապն այլ միջազգային փաստաթղթերի հետ

Հոդված 16. Կապն այլ միջազգային փաստաթղթերի հետ

1. Սույն կոնվենցիան չի ազդում այլ միջազգային փաստաթղթերի դրույթներից բխող իրավունքների եւ պարտավորությունների վրա, որոնց կողմ են համարվում կամ կհամարվեն սույն կոնվենցիայի Կողմերը, եւ որոնք ներառում են սույն կոնվենցիայով կարգավորվող հարցերի վերաբերյալ դրույթներ եւ

ապահովում են փաստաբանների՝ իրենց մասնագիտական գործունեությամբ ազատորեն զբաղվելու իրավունքի առավել մեծ պաշտպանությունը:

2. Սույն կոնվենցիայի Կողմերը կարող են միմյանց հետ կնքել սույն կոնվենցիայով նախատեսված հարցերի վերաբերյալ երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրեր՝ կոնվենցիայի դրույթները լրացնելու կամ ամրապնդելու կամ դրանում ամրագրված սկզբունքների կիրառումը խթանելու նպատակով:

Գլուխ V. Եզրափակիչ դրույթներ

Հոդված 17. Ստորագրումը եւ ուժի մեջ մտնելը

1. Սույն կոնվենցիան բաց է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների, դրա մշակմանը մասնակցած ոչ անդամ պետությունների եւ Եվրոպական միության կողմից ստորագրման համար:

2. Սույն կոնվենցիան ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման: Վավերացման, ընդունման կամ հաստատման մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին:

3. Սույն կոնվենցիան ուժի մեջ է մտնում ութ ստորագրող կողմերի, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի առնվազն վեց անդամ պետությունների կողմից սույն կոնվենցիայով նախատեսված պարտավորությունները նախորդ կետի դրույթներին համապատասխան ստանձնելու մասին իրենց համաձայնությունն արտահայտելու օրվանից հետո՝ եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը:

4. Ցանկացած ստորագրողի համար, որը հետագայում կստանձնի սույն կոնվենցիայով նախատեսված պարտավորությունները, այն ուժի մեջ է մտնում

վավերացման, ընդունման կամ հաստատման մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից հետո՝ եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված 18. Կոնվենցիային միանալը

1. Սույն կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն սույն կոնվենցիայի Կողմ պետությունների հետ խորհրդակցելուց եւ նրանց միաձայն համաձայնությունն ստանալուց հետո առաջարկում է Եվրոպայի խորհրդի անդամ չհանդիսացող ցանկացած պետության, որը չի մասնակցել կոնվենցիայի մշակման աշխատանքներին, Եվրոպայի խորհրդի կանոնադրության 20-րդ հոդվածի «դ» կետով նախատեսված մեծամասնության կողմից ընդունված որոշմամբ եւ Պայմանավորվող պետությունների՝ Նախարարների կոմիտեում հանդես գալու իրավունք ունեցող ներկայացուցիչների միաձայն քվեարկությամբ միանալ սույն կոնվենցիային:

2. Կոնվենցիային միացող ցանկացած պետության համար այն ուժի մեջ է մտնում միանալու մասին փաստաթուղթը Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելու օրվանից հետո՝ եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը:

3. Եվրոպայի խորհրդի անդամ չհանդիսացող ցանկացած Կողմ նպաստում է ԳՐԱՎՈ-ի եւ Կողմերի կոմիտեի գործունեության ֆինանսավորմանը՝ համաձայն Նախարարների կոմիտեի կողմից սահմանված պայմանների:

Հոդված 19. Տարածքային կիրառումը

1. Ցանկացած պետություն կամ Եվրոպական միությունը ստորագրելու ժամանակ կամ վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին իր փաստաթուղթն ի պահ հանձնելիս կարող է նշել այն տարածքը կամ տարածքները, որոնց նկատմամբ սույն կոնվենցիան կիրառվելու է:

2. Ցանկացած Կողմ հետագայում ցանկացած ժամանակ կարող է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին հասցեագրված իր հայտարարությամբ սույն կոնվենցիայի կիրառումը տարածել հայտարարության մեջ նշված ցանկացած այլ տարածքի վրա, որի միջազգային հարաբերությունների համար այն պատասխանատու է կամ որի անունից պարտավորություններ ստանձնելու իրավասություն ունի: Այդ տարածքի համար կոնվենցիան ուժի մեջ է մտնում այդ հայտարարությունը Գլխավոր քարտուղարի կողմից ստանալու օրվանից հետո՝ եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը:

3. Այդ հայտարարության մեջ նշված ցանկացած տարածքի առնչությամբ նախորդ երկու կետերի համաձայն արված ցանկացած հայտարարություն կարող է հետ կանչվել Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին հասցեագրված ծանուցմամբ: Հետկանչումն ուժի մեջ է մտնում այդ ծանուցումը Գլխավոր քարտուղարի կողմից ստանալու օրվանից հետո՝ եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված 20. Հայտարարություններ

1. Սույն կոնվենցիայի յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ստորագրելու ժամանակ կամ վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին իր փաստաթուղթն ի պահ հանձնելիս Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ուղղված հայտարարության միջոցով նշում է սույն կոնվենցիայի գործողության շրջանակում գտնվող մասնագիտական կոչումները՝ 3-րդ հոդվածի «ա» ենթակետի նպատակների համար: Այդ հայտարարությունը կարող է հետագայում ցանկացած ժամանակ եւ նույն ձեւով փոփոխվել: Այդ հայտարարությունը եւ դրա ցանկացած փոփոխություն չպետք է խաթարեն սույն կոնվենցիայի եւ դրանով նախատեսված պաշտպանության նպատակները:

2. Սույն կոնվենցիայի յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ստորագրելու ժամանակ կամ վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին

իր փաստաթուղթն ի պահ հանձնելիս կարող է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին հասցեագրված հայտարարությամբ հաղորդել, որ «պետական մարմիններ» սահմանումը ներառում է հետեւյալ մարմիններից մեկը կամ մի քանիսը.

i. օրենսդրական մարմիններ՝ դրանց կողմից իրականացվող այլ գործունեության առնչությամբ,

ii. դատական մարմիններ՝ դրանց կողմից իրականացվող այլ գործունեության առնչությամբ,

iii. ֆիզիկական կամ իրավաբանական անձինք՝ այնքանով, որքանով նրանք իրականացնում են հանրային գործառույթներ կամ կառավարում են հանրային ֆինանսական միջոցներ՝ համաձայն ներպետական իրավունքի:

Այդ հայտարարությունը կարող է հետագայում ցանկացած ժամանակ եւ նույն ձեւով փոփոխվել:

Հոդված 21. Վերապահումները

1. Ցանկացած պետություն կամ Եվրոպական միությունը ստորագրելու ժամանակ կամ վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին իր փաստաթուղթն ի պահ հանձնելիս կարող է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ուղղված հայտարարության միջոցով հայտնել, որ իրեն իրավունք է վերապահում չկիրառելու կամ միայն հատուկ դեպքերում կամ պայմաններում կիրառելու 6-րդ հոդվածում շարադրված դրույթները 2-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետի առնչությամբ: Սույն կոնվենցիայի դրույթների առնչությամբ որեւէ այլ վերապահում չի կարող արվել:

2. Ցանկացած Կողմ կարող է ամբողջությամբ կամ մասամբ հետ կանչել իր կողմից արված վերապահումը՝ այդ մասին Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին հասցեագրված հայտարարության միջոցով: Այդ

հայտարարությունն ուժի մեջ է մտնում Գլխավոր քարտուղարի կողմից դրա ստացման ամսաթվին:

Հոդված 22. Կոնվենցիայում փոփոխություններ կատարելը

1. Սույն կոնվենցիայում փոփոխություններ կատարելու վերաբերյալ Կողմի ներկայացրած ցանկացած առաջարկություն ուղարկվում է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին, որն իր հերթին այն փոխանցում է Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին, անդամ չհանդիսացող պետություններին, որոնք մասնակցել են դրա մշակմանը, ցանկացած ստորագրող պետության, ցանկացած Կողմ պետության, Եվրոպական միությանը եւ ցանկացած պետության, որը հրավիրվել է միանալու սույն կոնվենցիային՝ 18-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներին համապատասխան:

2. Կողմի ներկայացրած ցանկացած փոփոխություն ուղարկվում է Կողմերի կոմիտե, որը Նախարարների կոմիտեին ներկայացնում է առաջարկված փոփոխության վերաբերյալ իր կարծիքը:

3. Նախարարների կոմիտեն դիտարկում է առաջարկված փոփոխությունը եւ Կողմերի կոմիտեի ներկայացրած կարծիքը եւ կարող է սույն կոնվենցիայի անդամ չհանդիսացող պետությունների հետ խորհրդակցելուց հետո ընդունել այդ փոփոխությունը:

4. Սույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան Նախարարների կոմիտեի կողմից ընդունված ցանկացած փոփոխության տեքստ ուղարկվում է Կողմերին՝ ընդունման համար:

5. Սույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան ընդունված ցանկացած փոփոխություն ուժի մեջ է մտնում այդ փոփոխությունն ընդունելու մասին բոլոր Կողմերի կողմից Գլխավոր քարտուղարին տեղեկացնելու օրվանից հետո մեկամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված 23. Կոնվենցիայից դուրս գալը

1. Ցանկացած Կողմ ցանկացած ժամանակ կարող է դուրս գալ սույն կոնվենցիայից՝ այդ մասին Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին հասցեագրված ծանուցման միջոցով:
2. Կոնվենցիայից դուրս գալն ուժի մեջ է մտնում այդ ծանուցումը Գլխավոր քարտուղարի կողմից ստանալու օրվանից հետո՝ եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված 24. Ծանուցումները

Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին, դրա մշակմանը մասնակցած ոչ անդամ պետություններին, ցանկացած ստորագրող պետության, ցանկացած Կողմ պետության, Եվրոպական միությանը եւ ցանկացած պետության, որը հրավիրվել է միանալու սույն կոնվենցիային՝ 18-րդ հոդվածի դրույթներին համապատասխան, ծանուցում է՝

- ա. ցանկացած ստորագրման մասին,
- բ. վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին ցանկացած փաստաթուղթ ի պահ հանձնելու մասին,
- գ. 17-րդ եւ 18-րդ հոդվածներին համապատասխան սույն կոնվենցիան ուժի մեջ մտնելու ցանկացած ամսաթվի մասին,
- դ. 22-րդ հոդվածին համապատասխան ընդունված ցանկացած փոփոխության եւ այդ փոփոխությունն ուժի մեջ մտնելու ամսաթվի մասին,
- ե. 20-րդ հոդվածի համաձայն արված ցանկացած հայտարարության մասին,
- զ. 21-րդ հոդվածի համաձայն արված ցանկացած վերապահման եւ այդ վերապահումը հետ կանչելու մասին,

է. 23-րդ հոդվածի դրույթների համաձայն կոնվենցիայից դուրս գալու ցանկացած դեպքի մասին,

ը. սույն կոնվենցիային առնչվող ցանկացած այլ ակտի, ծանուցման կամ հաղորդակցության մասին:

Ի հավաստումն որի՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրել են սույն կոնվենցիան:

Կատարված է [Լյուքսեմբուրգ]-ում [2025 թվականի մայիսի] [13]-ին, անգլերեն եւ ֆրանսերեն, ընդ որում, երկու տեքստերն էլ հավասարազոր են, մեկ օրինակից, որն ի պահ է հանձնվում Եվրոպայի խորհրդի արխիվ: Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը վավերացված մեկական օրինակ փոխանցում է Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետություններին, սույն կոնվենցիայի մշակմանը մասնակցած ոչ անդամ պետություններին, ցանկացած ստորագրող պետության, ինչպես նաեւ Եվրոպական միությանը եւ կոնվենցիային միանալու հրավեր ստացած յուրաքանչյուր պետության:

Հավելված. Արտոնություններն ու անձեռնմխելիությունը (Հոդված 10)

1. Սույն հավելվածը կիրառվում է սույն կոնվենցիայի 10-րդ հոդվածում նշված՝ ԳՐԱՎՈ-ի անդամների, ինչպես նաեւ երկրներ այցելություններ կատարող պատվիրակությունների այլ անդամների նկատմամբ: Սույն հավելվածի նպատակներով «երկրներ այցելություններ կատարող պատվիրակությունների այլ անդամներ» արտահայտությունը ներառում է սույն կոնվենցիայի 12-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերում նշված անկախ ազգային փորձագետներին եւ մասնագետներին, Եվրոպայի խորհրդի աշխատակազմի անդամներին եւ երկրներ կատարվող այցելությունների ընթացքում ԳՐԱՎՈ-ի անդամներին ուղեկցելու համար Եվրոպայի խորհրդի կողմից ներգրավված թարգմանիչներին:

2. ԳՐԱՎՈ-ի անդամները եւ երկրներ այցելություններ կատարող պատվիրակությունների մյուս անդամները երկրներ այցելություններ նախապատրաստման եւ իրականացման, ինչպես նաեւ դրանց հետ կապված հետագա գործունեության մասով իրենց գործառույթներն իրականացնելիս եւ այդ գործառույթների իրականացման հետ կապված ուղեւորությունների ժամանակ օգտվում են հետեւյալ արտոնություններից եւ անձեռնմխելիությունից.

ա. անձեռնմխելիություն ձեռքակալումից կամ կալանավորումից եւ իրենց անձնական ուղեբեռի առգրավումից, ինչպես նաեւ անձեռնմխելիություն իրենց պաշտոնեական լիազորությունների սահմաններում իրենց արտաբերած կամ գրած խոսքերի եւ կատարած բոլոր արարքների առնչությամբ ցանկացած տեսակի իրավական գործընթացից,

բ. ազատում տեղաշարժվելու ազատության ցանկացած սահմանափակումից՝ իրենց բնակության երկրից դուրս գալիս կամ այնտեղ վերադառնալիս, այն երկիր մուտք գործելիս կամ այն երկրից դուրս գալիս, որտեղ իրենք իրականացնում են իրենց գործառույթները, ինչպես նաեւ ազատում օտարերկրացիների հաշվառումից այն երկրում, որն իրենք այցելում են կամ որով տարանցում են իրենց գործառույթներն իրականացնելիս:

3. Իրենց գործառույթներն իրականացնելիս կատարվող ուղեորությունների ընթացքում ԳՐԱՎՈ-ի անդամներին եւ երկրներ այցելություններ կատարող պատվիրակությունների մյուս անդամներին մաքսային եւ արժույթային վերահսկողության համար տրամադրվում են նույն պայմանները, ինչ պաշտոնական պարտականությունները ժամանակավորապես կատարող օտարերկրյա կառավարությունների ներկայացուցիչներին:

4. Սույն կոնվենցիայի իրականացման գնահատմանը վերաբերող փաստաթղթերը, որոնք գտնվում են ԳՐԱՎՈ-ի եւ երկրներ այցելություններ կատարող պատվիրակությունների այլ անդամների մոտ, անձեռնմխելի են: ԳՐԱՎՈ-ի պաշտոնական նամակագրության կամ ԳՐԱՎՈ-ի անդամների եւ երկրներ այցելություններ կատարող պատվիրակությունների այլ անդամների պաշտոնական հաղորդագրությունների նկատմամբ որեւէ սահմանափակում կամ գրաքննություն չի կիրառվում:

5. ԳՐԱՎՈ-ի անդամների եւ երկրներ այցելություններ կատարող պատվիրակությունների մյուս անդամների համար իրենց պարտականությունների կատարման ընթացքում խոսքի լիակատար ազատության եւ անկախության ապահովման համար, իրենց պարտականությունների կատարման սահմաններում իրենց արտաբերած կամ գրած խոսքերի եւ կատարած բոլոր արարքների առնչությամբ ցանկացած տեսակի իրավական գործընթացից անձեռնմխելիությունը պահպանվում է անկախ այդ անձանց կողմից այդ պարտականությունների կատարմանն այլեւս ներգրավված չլինելու հանգամանքից:

6. Սույն հավելվածի 1-ին կետում նշված անձանց արտոնություններ ու անձեռնմխելիություն տրվում են նրանց գործառույթների անկախ իրականացումն ապահովելու համար՝ ի շահ ԳՐԱՎՈ-ի, եւ ոչ նրանց անձնական շահի: Սույն հավելվածի 1-ին կետում նշված անձանց անձեռնմխելիությունից զրկելն իրականացվում է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի կողմից՝ ցանկացած դեպքում, երբ վերջինիս կարծիքով անձեռնմխելիությունը խոչընդոտում է արդարադատության իրականացումը, եւ երբ անձեռնմխելիությունը կարող է հանվել՝ առանց վնասելու ԳՐԱՎՈ-ի շահերը: